Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
դեկտեմբերի 20-ի նիստի N 51
արձանագրային որոշման

European Union

Empowered lives.
Resilient nations.

# ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր

## Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն Ծրագրի Փաստաթուղթ

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | ***“Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանին գտնվող “Բավրա” և “Նինոծմինդա” պետական սահմանի անցման կետերի սահմանների կառավարման կարողությունների զարգացում” Ծրագիր:*** |
| **ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿԶԱԾ) Արդյունք թիվ 2** | Պետության հաշվետվողականությունը բարելավելու, կառուցակարգերի և կարողությունների զարգացումը խթանելու և հանրության մասնակցությունն ընդլայնելու միջոցով կամրապնդվի ժողովրդավարական կառավարումը: |
| **ՄԱԶԾ Համագործակցության ծրագրի (ՀԾ) նպատակային ցուցանիշ 2.1** | Կենտրոնական և ոչ կենտրոնական մակարդակներում ենթակառուցվածքների և կառուցակարգերի բարելավման հաշվին ապահովված կլինի մարդու իրավունքների պաշտպանության շարունակական աճը: |
| **ՀԾ նպատակային ցուցանիշ 2.1.4** | Պետական մարմինների՝ պետական սահմանի և միգրացիայի վերահսկողության, թրաֆիքինգի դեմ պայքարի և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության կարողությունները զարգացած կլինեն: |
| **Իրականացնող գործընկեր.** | ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր |

**Ընդհանուր նպատակը.**

Ծրագրի ընդհանուր նպատակն է հայ-վրացական պետական սահմանի “Բավրա” և “Նինոծմինդա” անցման կետերում ներդնել սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշներ, որն ուղղված կլինի միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների խթանմանը, ինչպես նաև մարդկանց միջսահմանային շարժի հեշտացմանը:

**Հատուկ նպատակները.**

- ԵՄ չափանիշներին համապատասխանող ՍՀԿ համակարգի ներդնում «Բավրա» և «Նինոծմինդա» ՊՍԱԿ-ներում;
- Միջսահմանային համագործակցության ամրապնդում ԵՄ ՍՀԿ (սահմանների համալիր կառավարման) չափանիշներին համապատասխան;
- Պետական սահմանի կառավարման մարմինների աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացում:

Ծանուցում. Այս Ծրագիրը սերտորեն կապված է “ՀՀ Բագրատաշեն, Բավրա և Գոգավան ՊՍԱԿ-ների արդիականացում” Ծրագրի հետ և կօժանդակի Բավրա ՊՍԱԿ-ի գազաֆիկացման, էլեկտրաֆիկացման և օպտիկական մանրաթելային մալուխի տեղադրման աշխատանքներին, SS և անվտանգության համակարգերի ու սարքավորումների ձեռքբերմանը):

| | |
|---|---|
| Ծրագրի ժամկետը՝ 2012-2013<br>Ատլասում Ծրագրի համարը: 00068950<br>Մեկնարկի օրը՝ 2012թ. դեկտեմբեր<br>Ավարտի հաշվարկային օրը՝ 2013թ. հոկտեմբեր<br><br>Ծրագրի գնահատման հանձնաժողովի հանդիպման օրը՝ 2013թ. նոյեմբերի 20<br>Իրականացման եղանակը՝ Ուղղակի՝ ՄԱԶԾ կողմից | Ընդհանուր անհրաժեշտ գումարի չափը՝<br>1,675,000 Եվրո կամ 2,169,689.03 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ<br><br>Հատկացված գումարները՝<br>ՄԱԶԾ՝--<br>Այլ՝<br>ԵՄ դրամաշնորհ՝ 1,675,000 Եվրո կամ 2,169,689.03 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ<br><br>Կառավարություն՝ --<br>Ներդրում բնեղենով՝ --<br><br>***Ծանուցում Կիրառվել է 2012 թ. նոյեմբեր ամսվա ՄԱԿ-ի արտարժույթի փոխարժեքը՝ 1եվրո = 0.772ԱՄՆ դոլար*** |

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահ՝ Գագիկ Խաչատրյան

__________________

ՀՀ-ում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի ժ.պ.՝ Պատրիս Կոր Բիզո __________________
“____”___________2012

## Բովանդակություն

Իրավիճակի վերլուծությունը ....................................................................................3
ՍՀԿ ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև միջսահմանային համագործակցությունը ...5
<Բավրա> և <Նինոծմինդա> պետական սահմանի անցման կետեր (ՊՍԱԿ)...................... 6
Ռազմավարությունը...................................................................................................7
Շահառու մարմինները և թիրախ խմբերը......................................................................8
Ծրագրի ընդհանուր և հատուկ նպատակները...............................................................9
Կառավարումն ու կազմակերպչական կառուցվածքը.......................................................11
Արդյունքների և ֆինանսական միջոցների աղյուսակը..................................................14
Նախատեսվող գործակցություն.......................................................................................34
Ծրագրի մոնիտորինգը և գնահատումը........................................................................35
Իրավական նշանակություն ունեցող հարցերը .............................................................36

# Իրավիճակի վերլուծությունը

Համաձայն Հայաստան - Եվրոպական Միություն հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է Հարավային Կովկասում սահմանային կառավարման ոլորտում բարձրացնել համագործակցությունը և եվրոպական չափանիշներին համապատասխան հատկապես զարգացնել միջգերատեսչական համագործակցությունը սահմանների կառավարման մարմինների միջև: 2012 թվականի փետրվարի 12 -ին, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի նախագահությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ներառված են պետական սահմանի կառավարման ոլորտի համար պատասխանատու բոլոր մարմինների բարձրաստիճան ղեկավարները:

ԵՄ - ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ կողմից իրականացվող Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագիրը (ՀԿՍՀԿ) աջակցել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդին (ԱԱԽ) մշակել Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության ապահովման և պետական սահմանի համալիր կառավարման ռազմավարության նախագիծը, որն ընդունվել է ՀՀ նախագահի կարգադրությամբ 2010 թվականի նոյեմբերի 3-ին: Ռազմավարությունը իրավական հիմքեր է սահմանում պետական սահմանի համալիր կառավարման միջազգային և ԵՄ չափանիշների կիրառման համար և նպաստում, որպեսզի միջազգային լավագույն փորձը ներդրվի Հայաստանի իրավական համակարգում՝ ուղղված Հայաստանի պետական սահմանի կառավարման համակարգերի բարելավմանը, հարևան երկրների և միջազգային գործընկերների հետ համագործակցության զարգացմանը, ինչպես նաև անձանց և ապրանքների միջսահմանային շարժի խթանմանը, որն իր հերթին նպաստում է Հարավային Կովկասում սահմանային անվտանգության ապահովմանը և կայունության ամրապնդմանը:

ՀԿՍՀԿ ծրագիրը աջակցել է նաև Հայաստանի կառավարությունը մշակել Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության ապահովման և պետական սահմանի համալիր կառավարման ռազմավարությունը իրականացման 2011-2015 միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, որն ընդունվել է 2011 թ. ապրիլի 21 - ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՍՀԿ (սահմանների համալիր կառավարում) միջոցառումների ծրագրում թվարկված գործողություններն ուղղված են 'Մեկ Կանգառ' կամ 'Մեկ Պատուհան' սկզբունքի համապարփակ իրականացմանը, որը կնպաստի անձանց և ապրանքների օրինական ու ազատ տեղաշարժին, որը կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Միջոցառման ծրագրի հիման վրա անհրաժեշտ կլինի քննարկել սահմանի կառավարման մարմինների գործառույթների և դերակատարության բարելավման հարցը, որպեսզի վերացվեն գործառույթների կրկնությունները, անհարկի կրկնակի ստուգումներն ու վերահսկողությունը: Սույն Ծրագրի գործողությունները փոխկապակցված կլինեն վերոհիշյալ կառավարության որոշմամբ հաստատված ժամանակացույցի միջոցառումների հետ:

Սահմանային անցակետերում ՍՀԿ նոր ընթացակարգեր ներդնելու համար անհրաժեշտ է մեծածավալ աշխատանքներ իրականացնել ուղղված Հայաստանի ներկայիս սահմանի անցման կետերի ենթակառուցվածքների արդիականացմանը: ՀՀ կառավարությունը կարևորում է Բավրայի, Բագրատաշենի, Գոգավան ՊՍԱԿ-ների

արդիականացումը, ենթակառուցվածքների նորացման ծրագրի ներքո, որը կիրականացվի ՄԱԶԾ – ի կողմից: Այդ ծրագրի իրականացման համար, բացի ՄԱԶԾ-ի և Եվրոպական հանձնաժողովի կողմից հատկացվող ֆինանսավորումից, ՀՀ կառավարությունը բանակցությունների մեջ է գտնվել Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) և Հարևանության ներդրումային գործիք (NIF) հիմնադրամի հետ՝ վարկեր և դրամաշնորհներ ստանալու նպատակով:

2011 թվականի սեպտեմբերի 16-ին, “Բագրատաշեն, Բավրա և Գոգավան ՊՍԱԿ-ների արդիականացման” (MBBG կամ ԲԲԳԱ) Ծրագրի նախատեսվող մեկնարկի հետ կապված մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) քարտուղար, պարոն Արթուր Բաղդասարյանը հանդես է եկել այն հայտարարությամբ, որ ի լրումն նոր հասարակական ենթակառուցվածքների, սարքավորումների և ՍՀԿ ընթացակարգերի, պետք է բարձրացվի հանրության վստահությունը սահմանային գերատեսչությունների կողմից մատուցված հաշվետվողական, թափանցիկ ծառայությունների նկատմամբ:

Հայաստանում կոռուպցիայի մասին ընկալումները, որքանով որ դրանք համապատասխանում են իրականությանը, շարունակում են վնասել երկրի միջազգային հեղինակությանը, զսպում օտարերկրյա ներդրումները և խոչընդոտում անդրսահմանային առևտրում փոքր և միջին ձեռնարկությունների ներգրավվմանը: Միևնույն ժամանակ, սահմանների կառավարման հարցերում եվրոպական մոտեցումը պահանջում է սահմանային գերատեսչությունների մշակութային մտածելակերպը տեղաշարժել դեպի հանրությանը ծառայություններ մատուցելու փիլիսոփայությանը: Ծրագիրը կաջակցի սահմանային գերատեսչություններին բարեփոխել կադրային /մարդկային ռեսուրսների/ կառավարումը, ինչպես նաև բարձրացնել հաշվետվողականության, թափանցիկության և ամբողջականության չափանիշները կապված մասնագիտական վարքի և հանրության հետ փոխգործակցության հետ:

ԲԲԳԱ Ծրագրով նախատեսվում է իրականացնել երեք ՊՍԱԿ-ների ամբողջական արդիականացում, սակայն այդ Ծրագիրը չի նախատեսում շինարարական հրապարակից դուրս գտնվող նոր ինժեներական ենթակառուցվածքների (գազ, էլեկտրականություն, օպտիկամանրաթելային մալուխներ) տեղադրում, որի համար լրացուցիչ օժանդակություն է պահանջվում: “Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանին գտնվող “Բավրա” և “Նինոծմինդա” պետական սահմանի անցման կետերի սահմանների կառավարման կարողությունների զարգացում” Ծրագրի ֆինանսավորմամբ կիրականացվեն այդ ենթակառուցվածքների կառուցապատման աշխատանքները, ինչպես նաև Բավրա ՊՍԱԿ-ի նախնական էսքիզային նախագծերով նախատեսված դիրքից Հայաստան Վրաստան մայրուղուց շուրջ 150 մետր դեպի ձախ տեղափոխելու հետ կապված լրացուցիչ ինժեներական խորհրդատավական ծառայությունների մատուցման և բարձրավոլտ էլեկտրական սյուների տեղափոխման աշխատանքները: Բացի այդ, ինչպես կենտրոնական մակարդակում (ՀՀ ԿԱ ՊԵԿ կամ ՀՀ ԿԱ ԱԱԾ), այնպես էլ տեղական մակարդակում (պետական սահմանի անցման կետերում), այդ թվում Բավրա ՊՍԱԿ-ի սահմանային ծառայությունների կարիքների համար ձեռք կբերվեն անհրաժեշտ սարքավորումներ և Տեղեկատվական Տեխնոլոգիական համակարգեր, որոնք կնպաստեն ռիսկերի կառավարման և մոնիտորինգային աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև կկազմակերպվեն համապատասխան դասընթացներ՝ այդ սարքավորումներն ու համակարգերը օգտագործելու համար: Ինչպես և

ԲԲԳԱ Ծրագրի դեպքում, այս Ծրագրի իրականացման դեպքում նույնպես, նախքան գնումների գործընթացը սկսելը, ՄԱԶԾ-ն պետք է ստանա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Ծրագրի համապատասխան այլ շահառուների գրավոր համաձայնությունը՝ ձեռքբերվելիք տարբեր նյութերի, ապրանքների, սարքավորումների և ծրագրային ապահովման միջոցների տեխնիկական նկարագրությունների վերաբերյալ՝ նպատակ ունենալով ապահովել դրանց համատեղելիությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և շահառուների տնօրինման տակ գտնվող և նրանց կողմից օգտագործվող համապատասխան առկա ապրանքների հետ:

Գազի, էլեկտրականության, օպտիկամանրաթելային մալուխային համակարգերի տեղադրման հետ կապված տեխնիկական նկարագրերը կազմելիս, ՀՀ կառավարությունը հնարավորություն կունենա մասնակցել սահմանամերձ համայնքներին մատուցվող ծառայությունների բարելավմանը, որը կնպաստի համեմատաբար աղքատ շրջանների սոցիալ - տնտեսական զարգացմանը և դրական բնապահպանական ազդեցություն կարող է ունենալ: Շիրակի մարզի համայնքների գազաֆիկացումը, կարող է փոխարինել կամ նվազեցնել տների և շենքերի ջեռուցման համար պահանջվող վառելափայտի ծախսը և ապահովել էկոլոգիապես ավելի մաքուր վառելանյութ, ինչպես նաև նպաստել տեղական գյուղատնտեսական արդյունաբերության զարգացմանը:

2012 թվականի սեպտեմբերի 1-ից ՄԱԶԾ-ն իրականացնում է “Բագրատաշեն, Բավրա և Գոգավան պետական սահմանի անցման կետերի արդիականացում” Ծրագիրը (ԲԲԳԱ): ԲԲԳԱ Ծրագիրը սահմանային և ճանապարհային ենթակառուցվածքների վերանորոգման, սահմանների կառավարման ոլորտի աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգման համընդհանուր Ծրագիր է: ԲԲԳԱ Ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից՝ Եվրոպական Ներդրումային Բանկի (30.316 միլիոն Եվրո) տրամադրված վարկի, Հարևանության Ներդրումային Գործիք հիմնադրամի (12 միլիոն Եվրո) և ՄԱԶԾ-ի կողմից (800,000 Եվրո) տրամադրված դրամաշնորհների միջոցով: Բացի այդ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը ֆինանսավորում է Բագրատաշեն կամուրջի շինարարությունը(10.3 միլիոն Եվրո), որը նույնպես հանդիսանում է սահմանային ենթակառուցվածքների արդիականացման համընդհանուր ծրագրի ինտեգրալ մասը և իրականացվում է ՀՀ տրանսպորտի Կապի Նախարարության ԾԻԳ-ի կողմից:

## *ՍՀԿ ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև միջսահմանային համագործակցությունը*

Մոտ 10 տարի տևած բանակցությունների արդյունքում, 2011թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ և Վրաստանի ներքին գործերի նախարարության միջև ստորագրվեց սահմանային համագործակցության մասին համաձայնագիրը: Համաձայնագրով սահմանվեցին երկու երկրների միջև սահմանային անվտանգության ամրապնդման հարցում համալիր մոտեցման կիրառման համընդհանուր իրավական հիմքերը:

Այժմ այդ Համաձայնագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է համապատասխան օժանդակություն: Անհրաժեշտ են լրացուցիչ երկկողմ համաձայնագրեր, մասնավորապես՝

տեղեկատվության փոխանակման, համատեղ գործողությունների, ՊՍԱԿ-ներում, այդ թվում՝ "Բավրա" և "Նինոծմինդա" ՊՍԱԿ-ներում, սարքավորումների համատեղ օգտագործման ոլորտում, ինչպես նաև երկու երկրների կողմից համապատասխան օրենսդրական ակտերի, կանոնակարգերի և ստանդարտ գործառնական ընթացակարգերի մշակում և ընդունում: Անհրաժեշտ կլինի մշակել և կիրառության մեջ մտցնել սահմանային ներկայացուցիչների, ինչպես նաև երկկողմ կապի սպաների պաշտոնների անձնագրերի նախագծերը: ՀԿՍՀԿ ծրագրի կողմից բազմիցս հրավիրվել է ՀՀ պետական մարմինների ուշադրությունը սահմանապահ և մաքսային մարմինների միջև երկկողմ համագործակցության հնարավոր ձևաչափերի ուսումնասիրման հարցին, և այդ աշխատանքները՝ միջսահմանային համագործակցության այլ աշխատակարգերի մշակման հետ միասին կշարունակվեն սույն փաստաթղթում ներկայացվող ծրագրի շրջանակներում:

Երկու երկրների մաքսային մարմինները նաև քննարկում են ՊՍԱԿ-ների համատեղ օգտագործման հնարավորությունը, որի դեպքում կվերացվի արտահանվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը արտահանման երկրում և կսահմանվի սահմանով տեղափոխվող ապրանքների միասնական մաքսային հսկողություն: Ակնկալվում է, որ ընթացակարգերի նման պարզեցմամբ, կշարունակվի մաքսային սահմանով ապրանքների և տարանցիկ ուղևորների անցման տևողության կրճատման գործընթացը: (տես ստորև բերված աղյուսակը):

Սահմանահատման ներկայիս և ակնկալվող սպասման ժամանակը

| **Բավրա ՊՍԱԿ** | **Ներկայիս սպասման ժամանակը** | **Ակնկալվող սպասման ժամանակը** |
|---|---|---|
| - Հետիոտներ | Մինչև 15 րոպե | Մինչև 3 րոպե |
| - ավտոբուսի ուղևորներ (մինչև 30 հոգի) | Մինչև 45 րոպե | Մինչև 20 րոպե |
| - Ուղևորատար մեքենաներ | Մինչև 20 րոպե | Մինչև 5 րոպե |
| - Բեռնատարներ (դատարկ) | Մինչև 30 րոպե | Մինչև 10 րոպե |
| - Բեռնատարներ (բեռնված) | Մինչև 75 րոպե | Մինչև 25 րոպե |

## ***<Բավրա> և <Նինոծմինդա> պետական սահմանի անցման կետեր (ՊՍԱԿ)***

Պետական սահմանի "Բավրա" և "Նինոծմինդա" անցման կետերը գտնվում են ՀՀ հյուսիսային և Վրաստանի հարավային սահմանին, ծովի մակարդակից 2.120 մ բարձրության վրա՝ Իրանը, Հայաստանը, Վրաստանն ու Թուրքիան կապող տրանսպորտային ուղու վրա: Տեղանքը լեռնային է, կլիման՝ ցուրտ, խստաշունչ և ձնառատ ձմեռներով: Հաճախակի են ուժգին քամիները, մառախուղը և ձնաբքերը:

Իրանի Իսլամական Հանրապետությունից և Թուրքիայի Հանրապետությունից "Բավրա" և "Նինոծմինդա" ՊՍԱԿ-ներով անցնող շարժի ծավալները կտրականապես կաճեն 2013թ. ամառվանից՝ ելնելով մի շարք գործոններից, որոնք են Վրաստանի իշխանությունների կողմից Նինոծմինդայի շրջանում նախատեսված ճանապարհային ենթակառուցվածքների

վերականգնման աշխատանքների ավարտը, "Նինոծմինդա" ՊՍԱԿ-ից ոչ հեռու վրաց-թուրքական պետական սահմանի "Քարծախի" ՊՍԱԿ-ի բացումը, ՀՀ կառավարության՝ սահմանային ենթակառուցվածքների ընդհանուր արդիականացման ծրագրում "Բավրա" ՊՍԱԿ տանող ճանապարհների վերանորոգումը: Հարկ է նաև նշել, որ միջսահմանային շարժի ծավալներն այս ՊՍԱԿ-ով աճել են դեռևս 2010 թ.-ից՝ վրացական կողմում ճանապարհային ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքներն ավարտվելու հետ մեկտեղ:

**Ուղևորների և տրանսպորտային հոսքերի աճի միտումները և կանխատեսումը (օրեկան միջինացված թվերը)**

| "Բավրա" և "Նինոծմինդա" ՊՍԱԿ-ներ | Տեսակ, միջինացված օրեկան շարժ | | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2015 (հեռ.) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անձինք | Վրաստանից՝ Հայաստան | 565 | 649 | 828 | 904 | 2000 |
| | | Հայաստանից՝ Վրաստան | 558 | 669 | 851 | 933 | 1800 |
| | Տրանսպորտային միջոցներ (բոլոր տեսակների) | Վրաստանից՝ Հայաստան | 141 | 159 | 181 | 200 | 600 |
| | | Հայաստանից՝ Վրաստան | 141 | 166 | 185 | 205 | 500 |

"Բավրա" ՊՍԱԿ-ի ճանապարհային ենթակառուցվածքի ներկա անբարվոք վիճակի և սահմանի երկու կողմերում համապատասխան արդի սարքավորումների բացակայության պատճառով առկա է դեպի Իրան և Թուրքիա ու հակառակ ուղղությամբ, ինչպես նաև դեպի ԵՄ մարդկանց թրաֆիքինգի և ապրանքների ապօրինի տեղափոխման վտանգ:

## Ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության առաջին հոդվածի, Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կողմից Եվրամիության չափանիշների ընդունման և լավագույն փորձի ներդրման հանձնառությունը ենթադրում է սահմանների համալիր կառավարման ժամանակակից համակարգերի ստեղծում, որոնք կնպաստեն ապահովելու Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգությունը, ինչպես նաև

սահմաններով անցնող անձանց ու ապրանքների հեշտացված շարժին: Որպես իր հանձնառությունների երաշխիք, ՀՀ նախագահի 2010թ. նոյեմբերի 3-ի կարգադրությամբ հաստատվել է ՀՀ սահմանային անվտանգության ապահովման և պետական սահմանի համալիր կառարման ռազմավարությունը: Այդ կարգադրության համաձայն, 2010 թ. փետրվարի 12-ին ՀՀ ազգային անվտանգության խորհրդի (ՀՀ ԱԱԽ) քարտուղարի ղեկավարությամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին պետական սահմանի կառավարման ոլորտի պետական բոլոր մարմինների՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) սահմանապահ զորքերի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության վիզաների և անձնագրերի վարչության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության բարձրաստիճան ներկայացուցիչները: ՀՀ ազգային անվտանգության խորհուրդն իր առանցքային դերն ունի սահմանների կառավարման ոլորտի բոլոր մարմինների աշխատանքների համակարգման և մոնիտորինգի հարցում:

## Ծրագրի հիմնական շահառու մարմինները և թիրախ խմբերը

- **ՀՀ ազգային անվտանգության խորհուրդի աշխատակազմը** պատասխանատու է ՍՀԿ ոլորտում ազգային ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման համար: Բոլոր ռազմավարություններն առաջին հերթին պետք է հավանության արժանանան ՀՀ ԱԱԽ-ի կողմից:
- **ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանապահ զորքերն** իրականացնում են ՀՀ պետական սահմանի պահպանություն, ապահովում են պետական սահմանում ՀՀ անվտանգությունն ու անկախությունը, իրականացնում են սահմանային վերահսկողություն, պետական սահմանի ռեժիմի, սահմանային ռեժիմի և պետական սահմանի այնցման կետերի ռեժիմի պահպանություն:
- **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն** պատասխանատու է մաքսային ձևակերպումների և մաքսանենգության դեմ պայքարի համար:
- **ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայությունն** իրականացնում է ՀՀ պետական սահմանով տեղափոխվող կենդանի կենդանիների, սննդի և կենդանական ծագման արտադրանքի, կենդանական կերի, հավելումների, մանրէական կուլտուրաների, անասնաբուժական միջոցների, ինչպես նաև այնպիսի նյութերի և առարկաների նկատմամբ, որոնց միջոցով կարող են տեղափոխվել կենդանիների վարակների հարուցիչ մանրէներ:
- **ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը** պատասխանատու է ՀՀ պետական սահմանում ՀՀ մուտքի վիզաների տրամադրման համար:
- **Առողջապահության նախարարությունը** ՊՍԱԿ-ներում ներկայացված է սանիտարակարանտինային կետերի միջոցով: Դրանք իրականացնում են սանիտարակարանտինային հսկողություն, որն իրենից ներկայացնում է հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության հատուկ եղանակ:
- **Պետական սահմանը հատողները.** բեռնափոխադրող կազմակերպություններ, տրանսպորտային առաքողներ, տուրիստական գործակալություններ, ավտոբուսային

ուղևորություններ իրականացնող կազմակերպություններ և միջքազգային առևտրի ոլորտում գործող մասնագիտացված ընկերակցություններ:

## Ծրագրի ընդհանուր և հատուկ նպատակները

**<u>Ծրագրի ընդհանուր նպատակը</u>** հայ-վրացական պետական սահմանի “Բավրա” և “Նինոծմինդա” անցման կետերում սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշների ներդնումն է, ինչն ուղղված է միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների խթանմանը, ինչպես նաև մարդկանց միջսահմանային շարժի ակտիվացմանը:

**<u>Ծրագրի հատուկ նպատակներն են.</u>**

- ԵՄ չափանիշներին համապատասխանող ՍՀԿ համակարգի ներդնում «Բավրա» և «Նինոծմինդա» ՊՍԱԿ-ներում,
- միջսահմանային համագործակցության ամրապնդում՝ ԵՄ ՍՀԿ չափանիշներին համապատասխան,
- պետական սահմանի կառավարման մարմինների աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացում:

Սահմանների համալիր կառավարման սկզբունքների կիրառումը կարող է հզոր խթան հանդիսանալ միջսահմանային առևտրի և տարանցիկ փոխադրումների համար՝ պետական սահմանին առևտրի խոչընդոտների կրճատման շնորհիվ: Այս խոչընդոտները սովորաբար հանդես են գալիս տարբեր շահառու խմբերի կողմից սահմանը հատելու համար ծախսվող ժամանակի, տարբեր, այդ թվում՝ ոչ պաշտոնական վճարների քանակի և չափի տեսքով:

Սահմանահատման ժամանակի կրճատման համար անհրաժեշտ է համապատասխան արդի ենթակառուցվածքներ, սահմանահատման պարզեցված ընթացակարգերի կիրառում, ներգերատեսչական, միջգերատեսչական և միջազգային համագործակցության ծավալում պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների միջև (ՍՀԿ համակարգի երեք հիմնասյուները), որոնք պետք է ապահովեն մարդկանց և ապրանքների սահուն անցումը պետական սահմանով: Բացի այդ, պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների աշխատակիցները պետք է անցած լինեն համապատասխան մասնագիտական պատրաստություն և ապահովված լինեն ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Պետական սահմանում առկա կոռուպցիայի մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է հասարակության լայն զանգվածների իրազեկվածությունը սահմանահատման ընթացակարգերի և դրանց հետ կապված վճարների վերաբերյալ, ինչպես նաև պետական սահմանի կառավարման ոլորտի մարմինների կողմից թափանցիկության և հաշվետվողականության բարձր չափանիշների պահպանումը: Նոր ընթացակարգերի ներդրման շնորհիվ կարող են վերացվել կոռումպացված պաշտոնյաների կողմից կաշառակերության հնարավորությունները, իսկ նորագույն տեխնոլոգիաների ներդնումը կարող է ընդհանրապես կանխել նման դեպքերը՝ գործընթացների ավտոմատացման և սահմանային մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքի խիստ վերահսկման միջոցով:

Պետական սահմանի անցման կետերում անվտանգության ամրապնդման համար պահանջվում է նաև առևտրի և տարանցիկ փոխադրումների խոչընդոտների վերացում, արդի

ենթակառուցվածքի և տեխնիկական միջոցների տրամադրում, հստակ հիմքերի վրա դրված ներգերատեսչական, միջգերատեսչական և միջազգային համագործակցություն և տեղեկատվության փոխանակում սահմանային գերատեսչությունների միջև, լուրջ մասնագիտական պատրաստվածություն և բացարձակ անհանդուրժողականություն կոռուպցիայի նկատմամբ:

Առաջարկվող ծրագիրը կհամապատասխանի վերը թվարկված բոլոր պահանջներին՝ նպատակ ունենալով ապահովել իր վերջնական նպատակը, որը կայանում է միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների խթանման և միաժամանակ՝ սահմանային անվտանգության ապահովման մեջ, ինչի շնորհիվ կապահովվի նաև «Բավրա» և «Նինոծմինդա» ՊՍԱԿ-ներում սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշների ներդնումը: Ծրագիրն իր այս նպատակներին կհասնի կիրառելով երկկողմանի և ազգային մոտեցումներ: Երկկողմանի բաղադրիչները կառընչվեն Հայաստան-Վրաստանին: Հետևաբար, սահմանների կառավարման համար պատասխանատու համապատասխան գերատեսչություններին օժանդակություն կտրամադրվի Եվրոպայում և աշխարհում սահմանների կառավարման լավագույն փորձի վերաբերյալ դասընթացների և աշխատաժողովների միջոցով: ԵՄ անդամ երկրների և համապատասխան միջազգային գերատեսչությունների փորձի կիսումը առանցքային դերակտարություն կունենան այդ աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար:

Ծրագրի միջոցառումները կիրականացվեն չորս մոդուլների միջոցով: Այդպիսի թեմատիկ մոտեցումը թույլ կտա Ծրագրի թիմին մատուցել իր փորձառությունը և գիտելիքները ներդաշնակ, աստիճանաբար և կոհերենտ կերպով ու միաժամանակ օպտիմալ կերպով անդրադառնալով հարցերի այնպիսի շրջանակին որոնք բացատրում են թե ինչ է իրենից ներկայացնում սահմանների համալիր կառավարումը:

Ծրագիրը նախագծված է այնպես, որպեսզի ցանկացած տեսանկյունից դիտվող հարց ստանա իր սպառիչ լուծումը, այսինքն նաև հեռանկարում, քանի որ մոդուլները լավ շաղկապված են:

Միջոցառումների իրականացման համար, հատուկ ուշադրություն պետք է դարձվի ինտերակտիվ մեթոդների և կոնկրետ գործնական առդյունքների նույնականացման վրա, որոնք հնարավորինս կիրառելի լինեն տեղի իրականությունում: Սա շահառուներին հնարավորություն կտա նրա լավագույն կերպով կապելու ձեռքբերված արդյունքների հետ և նրանք իրենց կզգան սահմանների համալիր կառավարման ընթացակարգերի կիրառող սեփականատերեր, որը երաշխիք կհանդիսանա Ծրագրի թողած ազդեցությունների կայուն պահպանման համար:

Ծրագրի չորս մոդուլներն են՝

- **Մոդուլ 1: ՍՀԿ քաղաքականություն ու փորձը.**
- **Մոդուլ 2: Բավրա-Նինոցմինդա պետական սահմանի անցման կետում ՍՀԿ ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.**
- **Մոդուլ 3: Կարողությունների զարգացումը և որակի ապահովումը**
- **Մոդուլ 4: Սահմանային գերատեսչությունների հաշվետվողականություն, թափանցիկությունը և ազնվություն**

Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին ապահովված կլինեն հետևյալ արդյունքները.

- ՀՀ և Վրաստանի շահառու մարմիններում ՍՀԿ օրենսդրական և իրավական դաշտը ավելի կատարելագործված կլինի: Պետության և դոնոր կազմակերպությունների ջանքերը համակարգված կլինեն, իսկ «Բավրա», «Նինոծմինդա» և հնարավոր է, որ այլ ՊՍԱԿ-ներում սահմանահատման և մաքսային հսկողության ընթացակարգերը կատարելագործված և համաձայնեցված կլինեն:
- «Բավրա» և «Նինոծմինդա» ՊՍԱԿ-ների համար ներգերատեսչական և միջգերատեսչական ստանդարտ գործառնական ընթացակարգերի (ՍԳԸ) մշակված կլինեն, ինժեներական ենթակառուցվածքները ներդրված, տեխնիկական միջոցներն ու ՏՏ համակարգերը տրամադրված, ինչը կնպաստի ԵՄ ՍՀԿ սկզբունքների ներդրմանը:

- «Բավրա» և «Նինոծմինդա» ՊՍԱԿ-ներում ՀՀ և Վրաստանի սահմանային գերատեսչությունների կարողությունները զարգացած կլինեն մի շարք ոլորտներում, այդ թվում՝ փաստաթղթերի ստուգման, ռիսկերի գնահատման և պրոֆիլավորման, զննման մեթոդների, մտավոր սեփականության իրավունքի և կեղծ ապրանքանիշերով արտադրանքի հատկորոշման, փախստականների և ապաստան հայցողների իրավունքների, անձնակազմի կառավարման և մշակված ՍԳԸ-ների արդյունավետ կիրառման ոլորտներում հատուկ մասնագիտական պատրաստության ապահովման միջոցով:
- Սահմանային գերատեսչությունների աշխատանքի վերաբերյալ հանրության իրազեկվածության և դրանց նկատմամբ հասարակության վստահության մակարդակը բարձրացած կլինի, իսկ սահմանի կառավարման ոլորտի պատասխանատու մարմինները, հանրային ծառայության ոգուն և մշակույթին հարիր կերպով կապահովեն թափանցիկության, հաշվետվողականության և պրոֆեսիոնալ ազնվության բարձրագույն չափանիշները:

***<u>Կառավարումն ու կազմակերպչական կառուցվածքը</u>***

ՄԱԶԾ-ի վրաստանյան գրասենյակը հանդես կգա որպես ԵՄ-ի հետ պայմանաիր ստորագրող կողմ: Այդ պայմանագրի հավելված 1-ը հենց սույն ծրագրի նկարագիրն է և ՄԱԶԾ Վրաստանի գրասենյակն էլ կստանձնի Ծրագրի որակի ապահովման և վարչարարության պատասխանատվությունը, ներառյալ ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը:

Իր բարդ նկարագրի, տարածաշրջանային բնույթի և բազմաթիվ շահառուների առկայության պատճառով Ծրագիրը ուղղակիորեն կիրականացվի ՄԱԶԾ-ի կողմից, իսկ ՄԱԶԾ Վրաստանը հանդես կգա որպես ծրագրի հիմնական իրականացնող գործընկեր: ՀՀ կառավարությունը, հանձինս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ակտիվ մասնակցություն կունենա Ծրագրի պլանավորման և իրականացման աշխատանքներին:

Ծրագրի Ղեկավարման Հանձնաժողովը (ԾՂՀ) բաղկացած կլինի այն նույն պետական գերատեսչությունների ներկայացուցիչներից, որոնք հանդիսանում են ԲԲԳԱ Ծրագրի ղեկավարող հանձնաժողովի անդամները, ինչպես նաև ՄԱՋԾ-ից, Հայաստանում Եվրամիության Պատվիրակության, Միգրացիոն Քաղաքականությունների Մշակման Միջազգային Կենտրոնի (ՄՔՄՄԿ), Լատվիայի և ԵՄ անդամ երկրների հրավիրված դիտորդներից: Ի լրումն ԲԲԳԱ Ծրագրով նախատեսված հանդիպումներից ԾՂՀ-ն կհանդիպի տարեկան առնվազն երկու անգամ:

**Ծրագրի կազմակերպչական կառուցվածքը**

| Ծրագրի Ղեկավարման Հանձնաժողով, նաև ԲԲԳԱ-ի համար | | |
|---|---|---|
| Գլխավոր շահառու<br><br>ՀՀ ԿԱ ՊԵԿ | Իրականացնող<br><br>ՄԱՋԾ | Ավագ մատակարար<br><br>ԵՄ, ՄՔՄՄԿ, ԵՄ անդամ երկրներ (Լատվիա, Ֆրանսիա) |

**Ծրագրի իրականացման թիմը Հայաստանում**

1. Ծրագրի համակարգող /նաև կհամակարգի ԲԲԳԱ-ն/
2. Ֆինանսական/վարչական հարցերով օգնական,
3. Անտրի խթանման և մաքսային հարցերով փորձագետ
4. Ճանապարհային ենթակառուցվածքների և հաղորդակցությունների հարցերով փորձագետ
5. Տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով փորձագետ
6. Վարորդ-գործավարը:

Կստեղծվեն ծրագրի իրականացման երկու թիմեր, մեկը Հայաստանում, մյուսը՝ Վրաստանում: Հայաստանում Ծրագրի կազմում ընդգրկված կլինեն Ծրագրի համակարգողը, որը նաև կհամակարգի ԲԲԳԱ Ծրագիրը, ֆինանսական/վարչական հարցերով օգնականը, առևտրի խթանման և մաքսային հարցերով փորձագետը, ճանապարհային ենթակառուցվածքների և հաղորդակցությունների հարցերով փորձագետը, Տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով փորձագետը և վարորդ-գործավարը: Երկու թիմերին կօժանդակի կես դրույքով ներգրավված տեխնիկական հարցերով գլխավոր խորհրդատու, որը պետք է ունենա սահմանների համալիր կառավարման ոլորտում բազմաթիվ կառույցների մասնակցությամբ՝ միջսահմանային համագործակցության աշխատանքային փորձ:

Խորհրդատուի ամենօրյա պարտականությունների շրջանակում է Ծրագրի գործընկեր կողմերի հետ հաղորդակցության ապահովումը՝ կապված ծրագրային գործողությունների իրականացման, ինչպես նաև ծրագրային համախմբված հաշվետվութեունների կազմման և ներկայացման հետ:

Ծրագրերի համակարգողները կղեկավարեն Ծրագրի համապատասխան թիմը և ուղղակի կերպով հաշվետու կլինեն իրենց երկրի ՄԱԶԾ համապատասխան գրասենյակի կողմից նշանակված աշխատակիցներին:

ՄՔՄՄԿ-ն կլինի այս Ծրագրի իրականացնող գործընկերը և պատասխանատվություն կկրի ելքային արդյուքների ապահովման և միջոցների օգտագործման համար: Բացի այդ, ԵՄ անդամ երկրներ` Լատվիան և Ֆրանսիան ներգրավված կլինեն որոշակի միջոցառումների իրականացման մեջ, այդ թվում տեխնիկական փորձառության տրամադրումը:

## Արդյունքների և ֆինանսական միջոցների աղյուսակը

**Տարեկան աշխատանքային պլանը՝ 2012 թվական**

**ՄԱԶԾ Զարգացման Օժանդակության Շրջանակային Ծրագրի (ՀԾ) նպատակային ցուցանիշ 2**. *Պետության հաշվետվողականությունը բարելավելու, կառուցակարգերի և կարողությունների զարգացումը խթանելու և հանրության մասնակցությունն ընդլայնելու միջոցով կբարելավվի ժողովրդավարական կառավարումը:*

**ՄԱԶԾ համագործակցության ծրագրերի և ռեսուրսների շրջանակներում սահմանված ելքային ցուցիչներ, այդ թվում հիմնագիծը և թիրախները. Ծանուցում***

***Ցուցիչ:*** Բավրա պետական սահմանի անցակետի ենթակառուցվածքները զարգացած կլինեն, սահմանահատման և մաքսային հսկողության ընթացակարգերը հստակեցված

***Հիմնագիծ:*** Բավրա պետական սահմանի անցակետի ենթակառուցվածքները թերզարգացած են, սահմանահատման և մաքսային հսկողության ընթացակարգերը դեռևս չեն համապատասխանում միջազգային չափանիշներին և ժամանակատար են:

***Թիրախ:*** Մինչև 2014 թվականը արդիականացնել Բավրա պետական սահմանի անցակետի ենթակառուցվածքները, կատարելագործել սահմանահատման և մաքսային հսկողության ընթացակարգերը:

